ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ

www.src.am

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է ԻՆՔՆԱՇԽԱՏ

Մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարները ֆիզիկական անձանց վերադարձվում են ինքնաշխատ եղանակով և հարկային մարմին դիմելու անհրաժեշտություն չկա:

Ավտոմատ համակարգի միջոցով Կենտրոնական բանկը ՊԵԿ-ին տրամադրում է ֆիզիկական անձին պատկանող մեկ վավեր հաշվեհամար (անկախ արժույթից), որին էլ փոխանցվում է գումարը:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏՎԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՑ

Մի քանի աղբյուրից հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարների առավելագույն չափը գերազանցող գումարների վերադարձից կարող են օգտվել այն ֆիզիկական անձինք, որոնք մի քանի գործատուների մոտ աշխատում են որպես վարձու աշխատող, կամ, միաժամանակ, հանդիսանում են վարձու աշխատող և անհատ ձեռնարկատեր կամ նոտար, որի արդյունքում նրանց համար հաշվարկված և փոխանցված սոցիալական վճարի ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված առավելագույն չափը:

ԻՆՉՊԵՍ Է ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԸ

Եթե ֆիզիկական անձի ամսական եկամուտը չի գերազանցում 500 հազար դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5%-ի չափով, իսկ գերազանցելու դեպքում՝ եկամտի 10%-ի և 25 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 87 հազար 500 դրամից:

Եթե տարեկան եկամուտը չի գերազանցում 6 մլն դրամը, ապա սոցիալական վճարը հաշվարկվում է եկամտի 5%-ի չափով, իսկ գերազանցելու դեպքում՝ եկամտի 10%-ի և 300 հազար դրամի տարբերության չափով, բայց ոչ ավելի՝ 1 մլն 50 հազար դրամից:

ՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Է ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԸ

Սոցիալական վճարների գումարները վերադարձվում են, եթե մի քանի աղբյուրից ստացված ընդհանուր եկամուտը գերազանցում է ամսական 1 մլն 125 հազար դրամը (նվազագույն ամսական աշխատավարձի՝ 75 հազար դրամի 15-ապատիկը) և (կամ) տարեկան 13 մլն 500 հազար դրամը (նվազագույն ամսական աշխատավարձի 180-ապատիկը): Սոցիալական վճարների հաշվարկն իրականացվում է աշխատավարձից, քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների դիմաց ստացված եկամուտներից և ձեռնարկատիրական եկամտից:

! ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Այն դեպքում, երբ շահառուն ցանկանում է գումարները փոխանցվեն իր նախընտրած վավեր հաշվեհամարին, ապա կարող է այցելել ՊԵԿ սպասարկման ցանկացած սրահ կամ հաշվեհամարը ներկայացնել էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային հարցումների միասնական www.e-request.am հարթակի միջոցով: